

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՆԵՆԳ ԱՇԽԱՐՀԵՆ ՓՐԿՈՒԵԼՈՒ
ԱԴՈԹՔ

ՍԱՎՈՍ 12

Փրկէ զիս Տէ՛ր, որովհետեւ քեզի
հաւատարիմ մէկը չմնաց, մարդոց մէջ
վատահելի մէկը չմնաց:

Իրարու սուտ կը խօսին, շողոքորբ-
լեզուով, կեղծաւոր սրտով: Տէ՛ր փակէ՛
բոլոր շողոքորբ բերանները, կտրէ՛
մեծիսոսիկ լեզուներն անոնց՝ որոնք
կ'ըսեն. «Մեր լեզուով պիտի յաղթենք,
ո՞վ կրնայ փակել մեր բերանները»:

«Բայց, գ' ըսէ Տէ՛ր, – աղքատին
տառապանին ու չխառին հեզութեան
դիմաց՝ հիմա պիտի ելլեմ, եւ զիրենք
պիտի փրկեմ զիրենք նախատողներէն»:

ՏԻՐՈԶ խօսքերը մաքրամաքուր են,
զուտ արծաթի պէս՝ կաւէ հալոցով եօթն
անգամ զոտւած:

Դուն, որ խօսքդ կը պահես, Տէ՛ր,
մեզ միշտ պահպանէ՛ նման մարդոցմէ,
որովհետեւ մեր շրջապատը ամբա-
րիշտներով կը յորդի, եւ մարդոց մէջ
անարգները կը մեծարուին:

Նուազեցո՛ր աչքերուս քունը,
Տէ՛ր, եւ իմ գլուխէս թօքափէ՛ նիրիք,
որ ծովութեամբ ծանրացած՝ մար-
մինս կը պաշարէ: Ամէն ժամ զիս
արթուն եւ պատրա՛ստ դարձուր, որ
զգաստութեան եւ արդարութեամբ
վարեմ կեսնը:

Տէ՛ր, նայէ՛ իմ նեխած ու քա-
րախած հոգիիս եւ լուա՛ աստուածա-
յին ջուրով: Համեմէ՛ հոգեւոր աղովի,
օծէ՛ անուշահոտ սուրբ խղովդ եւ
կատարեալ առողջութիւն ընձեռէ՛:

Եփեմ Ասորի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒԻԱՆ
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Կազմակերպութեամբ Կրօնա-
կան Ժողովին եւ Ազգային Առաջ-
նորդարանի Երիտասարդական
Յանձնախումբին, Երեքշաբթի, 30
Ապրիլ 2019-ին սկսեալ եւ ամէն
Երեքշաբթի գիշեր, ժամը 7:00-8:00,
Պուրճ Համուտի Ս. Վարդանանց
Եկեղեցւոյ մէջ պիտի մատուցուի
սուրբ պատարագ:

Սուրբ պատարագը պիտի երգէ
հաւատացեալ ժողովուրդը: Սուրբ
պատարագի ընթացքին, հոգեւոր
խորհրդածութիւն պիտի կատարէ
Լիբանանի Հայոց Առաջնորդ՝
Գէրշ. Տ. Նարեկ Արքեպիսկոպոս:
Այս սուրբ պատարագին նպա-
տակն է առիթ տալ մեր այն հայոր-
դիներուն, որոնք Կիրակիի կողքին,
շաբթուան ընթացքին եւս կը փա-
փաքին Հայ Եկեղեցւոյ հոգեւոր
սնունդը ստանալ: Կը հրաւիրենք
մեր ժողովուրդի զաւակները իրենց
ամենօրեայ հելքին մէջ պահ մը
կանգ առնելու եւ աղօթքով Աստու-
ծոյ ու իրարու հետ ըլլալու:

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ թերքը ա-
մէն Կիրակի կը բաժնուի մեր ժողո-
վուրդին, Եկեղեցիներու բանկալին
մօս: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտուել
«Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել
«Like»ը, կարդալու կամ անդա-
մագրուելու համար:

ՀԱՍՑԵ

ՃՐԱԳ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,

P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300 - facebook-h.tg.jerak.chrwaq.rtrpr

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ՔՈ ԽՈՍՔ ԻՄ ՈՅԵՐՈՒՄ ՖՐԱՇ Է ՈՒ ԻՄ ՇԱԽԻՆԵՐՈՒՄ ՀՈՅՄ
(Ա. 119.105)

ԺԲ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 26 ՄԱՅԻՆ 2019

ԹԻՒ 21

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒՏԱԾՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գրծ. 20.17-38: Ա. Յհ. 3.2-6:

ՅԻՍՈՒԽ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԽՏԱՐԱՆԸ ԸՍ ՅՈՎՃԱՆՆՈՒ 9.39-10.10

Յիսուս ըսաւ. «Աշխարհ եկայ յայտնելու, թէ որո՞նք են կոյրերը եւ
որո՞նք՝ տեսնողները, որպէսզի կոյրերը տեսնեն եւ անոնք, որ կը տեսնեն՝
կուրնան»

Փարիսեցիներէն ոմանք, որոնք իր շուրջն էին, լսեցին ասիկա եւ
հարցուցին. «Արդեօք մե՞նք ալ կոյր ենք»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ կոյր ըլլայիք, մեղք պիտի
չունենայիք. քայց քանի կ'ըսէք թէ կը տեսնէք, կը նշանակէ՛ թէ ձեր մեղաւոր
ըլլալը կը հաստատէք: Հաստատ զիտցէք, ամ որ ոչխարներուն փարախը
դրնէն չի մտներ, այլ որիշ տեղէ կը մազցի, անիկա զող է եւ աւազակ, իսկ
ան, որ դրնէն կը մտնէ՝ անիկա ոչխարներուն հովիս է: Դոնապանը դուռը
կը քանայ անոր եւ ոչխարները իր ձայնիս կը հետեւին: Իրենց անուններով
կը կանչէ իր ոչխարները եւ դուրս կը տանի զանոնք: Ես երբ իր ոչխարները
դուրս կը հանէ, ինք կ'առաջնորդէ եւ ոչխարները կը հետեւին իրեն,
որովհետեւ իր ձայնը կը ճանչնան: Օտարին չեն հետեւիք. ընդհակառակը,
կը փախչին անկէ, որովհետեւ օտարներու ձայնը չեն ճանչնար»:

Յիսուս այս առակը խօսեցաւ անոնց, սակայն անոնք չհասկցան թէ ի՞նչ
ըսել կ'ուզէր իրենց: Ուստի Յիսուս կրկին ըսաւ անոնց. «Հաստատ զիտցէք,
թէ են եմ ոչխարներուն դուռը: Բոլոր անոնք, որոնք ինձմէ առաջ եկան, զող
էին եւ աւազակ. քայց ոչխարները անոնց չհետեւեցան: Ես եմ դուռը. ով որ
ինձմէ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի, պիտի մտնէ եւ ելլէ եւ ճարակ
գտնէ: Գողը կու զայ միայն զողնալու, սպաննելու եւ փճացնելու համար:
Ես եկայ, որպէսզի կեանք ունենան եւ լեցուն կեանք ունենան»:

ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵՑԱԼԻՆԱՄԱԿՆԵՐ

ԱՌԱՔԵԱԼՍԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ

20.17-38

Միետուսէն Պօղոս լուր դրկեց Եփես եւ եկեղեցոյ երեցները իր ժովք կամչեց: Երբ ամռնէ եկան, ըստ ամռնց. «Դուք ամճամք գիտէք, թէ Ասիա գալուս առաջին օրէն ի վեր իմշպէս վարուեցայ ձեզի հետ, ամբողջ այս ժամանակամիջոցին: Ամենայն խոնարհութեամբ եւ յանախ արցութեով ծառայեցի Աստուծոյ, երեամերու միթքած բոլոր փորձութիւնները կրելով: Գիտէք, թէ բնաւ չժառանեցայ ձեզմէ, օգտակար բաներու մասին խօսեցայ եւ սորվեցուցի ձեզի, երապարակաւ ըլլայ, թէ տան մէջ: Թէ՛ երեամերուն եւ թէ՛ հեթանոսներուն տուի նոյն վկայութիւնը եւ պատգամք՝ ապաշխարութեամբ Աստուծոյ դառնալու եւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հաւատալու:

Հիմա ահաւասիկ Սուրբ Հոգին մղումով Երուսաղէմ կ'երթամ: Զեմ գիտեր, թէ հոն իմշ պիտի պատահի իմծի: Միայն գիտեմ, թէ ամէն մէկ ժաղաքի մէջ Սուրբ Հոգին կ'ազդարարէ իմծի բաելով, թէ բանտարկութիւն եւ նեղութիւն կը սպասեն իմծի: Բայց հոգս չէ. իմծի համար կարեւոր կեանքս չէ, այլ՝ կ'ուզեմ ուրախութեամբ իր վախճանին հասցնել սկսած գործս, այն պաշտօնը, որ Տէր Յիսուս տուաւ իմծի՝ Աստուծոյ շնորհքը աւետարանելու: Հիմա գիտեմ, թէ այսուհետեւ պիտի չտեսնէք զի՞: Շարութակել մնացած բաժինը Աստուծածաշին նոր Կուտարամէն:

ՅՈՎԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴԱՌԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ

3.1-6

Տեսէք թէ ի'նչպիսի սիրով Հայրը մեզ սիրեց, ուզելով որ Աստուծոյ որդիներ կոչուինք, եւ արդարեւ Աստուծոյ որդիներն ենք: Աշխարհը մեզ չի ճանչնար, որովհետեւ չճանչցաւ զայն:

Սիրելիներ, այժմ Աստուծոյ որդիներ ենք: Թէ ի'նչպէս պիտի ըլլանք յետոյ՝ չենք գիտեր տակալին. բայց գիտենք թէ երբ Քրիստոս յայտնուի իրեն նման պիտի ըլլանք, որովհետեւ զինք պիտի տեսնենք իր խկութեան մէջ: Ով որ այս յոյսը ունի ինքնինք կը մաքրէ, ինչպէս որ Քրիստոս ինք մաքրուի է:

Ով որ կը մեղանչէ՝ Աստուծոյ օրէնքը կը խախտէ, եւ մեղքը ինքնին օրէնքին խախտումն է: Գիտէք թէ Քրիստոս յայտնուեցաւ մեր մեղքերը ջնջելու համար, եւ թէ իր մէջ մեղք չկայ: Ով որ Քրիստոսի միացած կը մնայ՝ չի մեղանչեր. իսկ ով որ կը մեղանչէ՝ զայն երբեք տեսած ու ճանչցած չէ:

Որսեակներս, թող ունէ մէկը ձեզ չխարէ: Ով որ արդարութիւն կը գործէ՝ արդար է, ինչպէս Քրիստոս ինք արդար է: Իսկ ով որ մեղք կը գործէ Սատանային հետեւող մըն է, որովհետեւ Սատանան սկիզբէն ի վեր մեղք կը գործէ: Եւ Աստուծոյ Որդին աշխարհ եկաւ՝ Սատանային գործունեութեան վերջ դնելու համար:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Քրիստոս իր հրաշափառ յարութենէն 40 օր ետք երեւցաւ իր աշակերտներուն՝ անոնց հետ խօսելով Աստուծոյ արքայութեան մասին:

Քառասուներորդ օրը Յիսուս պատուիրեց աշակերտներուն երուսաղէմ մնալ մինչեւ Պենտեկոստէի օրը, երբ Ս. Հոգին պիտի իջնէ երկինքն եւ բնակի անոնց մէջ:

Այսուհետեւ իր աշակերտներուն հետ Քրիստոս Զիթենեաց լեռը բարձրացաւ, ուր օրհնեց զանոնք: Եւ երբ կ'օրհնէր երկինք բարձրացաւ բոլորին աչքին առջեւ: Երբ տակաւին առաքեալները իրենց աչքերը երկինք յարած՝ Յիսուսի մեկնիլը կը դիտէին, ահա երկու սպիտակազգեստ մարդիկ երեւցան անոնց եւ ըսին.

–Ո՞վ Գալիխացիներ, ինչո՞ւ կեցեր երկինքը կը դիտէք: Այս Յիսուսը, որ երկինք համբարձաւ, օր մը դարձեալ պիտի գայ այնպէս՝ ինչպէս անոր երկինք երթալը տեսաք:

Քրիստոս համբարձաւ, որպէսզի երկինքը երկրին միաւորէ եւ աստւածացնէ ու փառաւորէ մարդկային բնութիւնը:

Ան երկինք ելաւ եւ նստաւ Հօրը աջ կողմը առանց լքելու իր սիրելի առաքեալները եւ բոլոր անոնք, որոնք կը հաւատան եւ կը սիրեն զինք:

Յիսուս ըսաւ.

«Ես ճեղի հետ եմ, մինչեւ աշխարհի կերպ»:

Ի՞ՆՉ Է ՄՈՄԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ

Եկեղեցւոյ մէջ մոմ վառելը շատ հին սովորութիւն է: Անշուշտ, հին ժամանակներուն, մոմի գործածութիւնը անհրաժեշտ էր լուսաւորութեան համար մանաւանդ, երբ արարողութիւնները տեղի կ'ունենային գիշերները: Ժամանակի ընթացքին երբ մոմի լոյսը փոխարինուեցաւ ճրագներով եւ ապա ելեկտրականութեամբ, մոմի գործածութիւնը մնաց:

Սուրբերու նկարներուն առջեւ մոմ վառելը զոհ մատուցանելու իմաստ ունի: Ժամանակին, Հին կտակարանին մէջ, մարդիկ իրենց մեղքերը քաւելու համար Աստուծոյ կենդանի զոհ կը մատուցանէին, զոհին արինը հեղելով: Քրիստոնէական շրջանին հաւատացեալներ զոհ մատուցանելէ դադրեցան, որովհետեւ Քրիստոս Ինք եղաւ միակ եւ զիսաւոր զոհը, որ խաչին վրայ զոհուեցաւ եւ իր արինը հեղեց մարդոց մեղքերուն համար եւ Ս. Պատարագը յիշատակումն է խաչի վրայ Քրիստոսի զոհագործուելուն:

Ներկայիս, մոմը կը խորհրդանշէ անարին եւ բանաւոր զոհ, փոխան հին կտակարանի կենդանական արեան հեղմամբ զոհերուն:

«Զօրացի՛ր ու քա՛ջ եղիր: Մի վախնար ընաւ եւ մի՛ վարանիր, որովհետեւ ես՝ քու Տէր Աստւածդ, քու հետղ եմ ո՛ւր որ ալ երթաս»: (Յեսու 1.9)